

Թեան մասին, որը մեք քննելու ենք: Արեւիսան, այսինքն մարդկային բնութիւնը իւր ֆիզիքական և հոգեկան կողմերովը, ինչպէս և ամենայն միւս երեւոյթները, բաղմամբ ինդիւիդուալ չէ զառնում, որով մարդու խորհողական ընդունակութիւնը միշտ պարապած է:

Արդէս Երայլ—բուսաբանութեան հիմք եղաւ, Կենդանի — կենդանաբանութեան, իսկ երկուսը միասին—երկրագործութեան դիտութեան և քաղաքական տնտեսութեան, նոյնպէս Ժողովրդային շատ դիտութեանց ճիշդերի մշակութեան նիւթ եղաւ: Այսպէս մեջ ելեւիս իւր—Երայլ ինքնը նշանաւոր տեղ ունի: Քաղաքակրթութիւնը մեծ յառաջադիմութիւն է տանում, երբ կանոնաւոր կրթութեան և դաստառութեան միջնորդութեամբ իւր ողին աճող սերնդին աւանդելով՝ տշխատում է հաստատ ապահովուել առ յապալս: Այդ իբրեւ կանոն լինելով, պէտք է մի և նոյն ժամանակ ստել, որ աճող սերունդը կարող է այդ աստիճանին հասնել առաջ, քան կրթութիւնը և դաստառութիւնը կր կանոնաւորուի, այսինքն առաջ՝ քան կրթութիւնը և դաստառութիւնը վերացան խորհողութեան նիւթ կդառնան, վասն զի ինչպէս ամենայն բանի մեջ, նոյնպէս և այս բանի մեջ՝ ուսումը դործնական կերպով երկար ժամանակ դնում է իւր ճանապարհով, մինչև որ այդ դործնականութիւնը վերջապէս պահանջողութիւն զգայ՝ ինչպէս որ դիտութիւնը պահանջում է ծանր և խելացի խորհելու կարօտութիւնը, և ըստ այնմ դործելու:

Իսկ երբ այդպիսի ձգտողութիւն է ծրվում, այսինքն երբ երեւանների կրթելու

և դաս տալու խնդիրը ուսումնական կերպարանք է ընդունում, մի հոգեկան զօրութիւն է ծագում, որ ձայն է պահանջում ամենայն դործնական խնդիրներում, գերդաստանի, գալրոցի, տէրութեան և միւս շրջանների կեանքում: Յիշեալ բոլոր զօրութիւնները՝ ուսումնական մանկավարժ—Երայլ ևս պահանջում է, որ երեւանները ենթարկուին այն կանոններին, ոճերին, վարմունքի եղանակին, հնարքներին, պատուէրներին և նպատակներին, որոնց նա ճշմարիտ և բանաւոր է համարում: Ինչպէս Պղատունը հին ժամանակներում ախոյեան դուրս եկաւ պահանջելով, որ Աթենացի երիտասարդները ուսում առնեն և կրթութիւն նորա փիլիսոփայութեան սկզբունքների և տրամաբանութիւնների հիմամբ:

Ահա այն ընդհանուր զօրութիւնները, որոնց ազդեցութեան տակ երեւանի անհատականութիւնը իւր զարգացման ընթացքը անցուցանում է:

Թարգ. * * *

ՊԵՏԵՐԸՄ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԵՐԱՆ

Մարդիկ լիքեանք հասանող ամեն թշուառութիւններից ամենազարհուրելին պատերազմն է: Ուզել, ժանտամահը, ջրհեղեղը, երկրաշարժութիւնը այդ պատահաւից առաւել քիչ կործանող են, ոչ մեծ նակ նորա համար, որ դժբա աւելի սակաւ են հանդիպում, քան թէ պատերազմները, առանց որոց ասեալ թէ մարդկային լիակրթութիւնը չէր կրող ոտքի վերայ մնալ, այլ և նորա համար, որ նիւթական բարեք-

ների կորուստի հետ միասին՝ կորչում են աննիւթականքն էլ, հարուած են ստանում մարդկութեան բարձրագոյն, ամենասրբազան բարիքներն էլ։ Ամեն մի թըռուռութիւնը, ամեն մի վիշտը մերձաւորի՝ յարուցանում է մարդկանց սրտերի մէջ մի անբաժան, որքանեւիցէ զործունեայ զգայակցութիւն, յարուցանում է ուժեղ, խելացի զործունէութիւն նորա հետեանքների աւաջն առնելու ու թեթեւացնելու համար. կարճ ասենք, զարթեցնում է մարդկանց լուսագոյն զօրութիւնները։ Այսպէս չէ պատերազմի մէջ. այս տեղ ամբողջ ազգեր, միլիոնաւոր մարդիք դուրս են գցում մարդկային ընդհանուր գերդատանից, ուրիշ միլիոնաւոր մարդկանց և ազգերի և իրանց հասարակական, շատ ու քիչ գթասիրտ յարաբերութիւնները փոխարկում են տմարդի և գազանական յարաբերութիւնների, որոնց նպատակն է փոխադարձ կործանումն, ստորացնումն և աւերումն։ Այլ լաւ են անում նոքա։ Նոքա իրանց զործը կատարում են հմուտ, հաստատակամութեամբ և փառահեղ կերպով։ Հրմուտ, — քանզի նոքա երկրի ժամանակ և ճշտութեամբ ուսել են կործանել, որ զիւտութիւններից ամենաթանգն է. հաստատակամութեամբ, — քանզի այդ զործի մէջ ընտրվում է ժողովրդի աչքը, նորա ամենալաւ անդամները. փառահեղ կերպով, — քանզի ազգերը տալիս են նորանց իրանց բազմամեայ պահեստները, իրանց ունեցուածքը, միայն թէ թշնամին փշանար, կործանվէր, միայն թէ յաղթութիւնը կատարեալ լինէր։ Բայց ի՞նչ առթիով են կատարվում այս ամեն սարսափները։ Ի՞նչը դրդեց այդ հայրերին, եղբայրներին, ա-

րանցը հեռանալով հայրական օջաղից՝ յարձակուիլ իրանց անձանօթ մարդկանց վերայ, սպանել նորանց, այրել նոցա բռնակութիւնները, ոտնատակ տալ նոցա դաշտերը։ Ի՞նչն է ստիպում նորանց, խեղդելով իրանց մէջ բոլոր մարդկայինը և չեւանաչելով այդ ուրիշների մէջ ևս, դառնալ կործանման զործիքներ, — զրկանքն արդեօք, արեւական վշտացումն, թէ բնական օրէնքը, թէ բնածին ատելութիւնը. ո՞հ, չէ, ատելութիւնը թէ և շարժառիթներից մինն է, բայց դա պատուաստած է, իւրացուցած է մարդաստեղծներին միայն քիչերի ինքնաշահ հաշիւների հետեանքով. խումբերի համար խօսում են "քաղաքական և հաւատական" շահերի վերայ, "արտաքին ազդեցութեան" կարեւորութեան վերայ, հզօրութեան, ազդայնութեան վերայ, և մի ուրիշ բոպէին յայտնում են նորան, թէ պատերազմը անշուշտ հարկաւոր է, թէ իւրաքանչիւր քաղաքացու սրբազան պարտքն է զոհել իւր անձն ու գոյքը։

Բայց ահա վերացած է կոտորածը, վերջին նեխվող դիակները հաւաքված են. շիջանում են հրդէհները, արիւնշաղաղ զործոց վերջին վաստակաբէկ զործաւորները դառնում են դէպ հայրենի օջաղը, բժշկվում են վէրքերը, վերանորոգվում են աւերակները, հաշիւները ներկայումս որպէս և իցէ վերջացած են, և մարդիք դարձեալ ձեռնարկում են իրանց զործերը, և այժմ միայն սկսում են համադրել, որ անթիւ նիւթական կորուստների հետ միասին ստացել են շատ աննիւթական կորուստներ ևս։ Պատերազմի զրդիօք, երկիւղը և նորա ելքի անյայտութիւնը, զօ-

բութիւնների չափազանց ձգտողութիւնը, որի համար բոլոր քաղաքական զարգացման շահերը աչքաթող էին արված, ծանր և երկար թողում են իրանց հետքերը յաղթողների և յաղթուածների վերայ: Պատերազմը հասցրուց ծանր հարուածներ նոցա կտրղագրութիւններին, նոցա բարոյականութեանը, նոցա քաղաքական աղաւթութեանը, որի լինելը աւելի դժուար ու ծանր է, քան թէ կործանված քաղաքների ու գիւղերի շինութիւնը:

Այսպէս են սովորական հեռեանքները պատերազմերի, որոնք առ հասարակ վերջանում են "յաւիտենական խաղաղութիւնով" կամ լաւ ևս է ասել՝ մի ապագայ պատերազմի առիթով: Բայց արդեօք երկար է լինելու այս խաղաղութիւնը, յայտնի չէ: Արդէս և իցէ, ոչ երկար, եթէ կաշնատեն յարուցանել և բորբոքել ազգաց մէջ փոխադարձ թշնամութիւն. եթէ, ոչ միայն ներկայ՝ այլ և ապագայ սերունդին ևս Ազգութիւնների դիմակի տակ կքարոզեն անհամբերութիւն, գոռողութիւն և ատելութիւն, եթէ երեսաներին անգամ հանդիսապէս կքարոզեն, թէ կան ազգեր Աստուածանից ընտրուած, կան և ազգեր յատկապէս չարագործներից բաղկացած, որոց հարկաւոր էր փչացնել: Անշուշտ մի այս օրինակ ատելութեան զարգացումն և կրթութիւն ունէր դրած իւր մտքումը և Պրուսական արքունի կառավարութիւնը, հրատարակելով ներքոյ յառաջ բերեալ հրովարտակը: Պէտք էր նկատել սակայն որ այս հրովարտակը հանդիպեցաւ ընդհանուր տհաճութեանը նոցա, որոց վերաբերվում էր այն, և սրտածառ տուեց շատ հասաւտամիտ բողոքների: Այդ հրովար-

տակը յետագայ բովանդակութիւնն ունի:

"Մեր և Պրանսիայի մէջ բորբոքուած պատերազմը, որի մէջ ամենքը, որոնք ընդունակ էին զէնք կրելու, բարձրացրին այդ զէնքը Աստուծով թաղաւորի և հայրենեաց համար, պարտաւորութիւն է դրնում ուսումնարանի վերայ, որ նա ևս իւր կողմից գործակից լինի այն բանին, որպէս զի զօրութեանց Տէրը յաղթութիւն պարգևէ մեր զէնքին, պահպանէ մեր ազգի ամեն դատակարգերի մէջ նոյնքան փառաւորապէս երևացած հաւատարմութեան և անձնագոհութեան ոգին:",

"Ըստ այսմ մենք հրամայում ենք, որ ուսումնարանների մէջ դասերը իւրաքանչիւր օր սկսվին աղօթքով հետեւեալ կարգաւ: Ակզնում կարգաւ սուրբ դրբից մի հատուած այժմեան գործոց դրութեանը վերաբերութեամբ. յետոյ կկարդայ ուսուցիչը մի աղօթք և վերջապէս կերգեն այժմեան ժամանակին պատշաճ մտղթողական երգեր: Չցանկանալով նեղութիւն տալ Պ. Գիրեկտրների, վերատեսուչներին և ուսուցիչներին յարմար աղօթքների, երգերի, հատուածների և դասերի մէջ ընտրութիւն անելու մասին, մենք կարծում ենք որ, շատերի ցանկութեանը բաւականութիւն տուած կլինինք, եթէ նշանակենք շարթութեայ իւրաքանչիւր աւուր համար հետեւեալ տեղերը: Արեւշարթի օրը, Սաղ. 57ր. Արեքշարթի օրը Սաղ. 21ր. Չորեքշարթի օրը, Սաղ. 27ր. Էինդշարթի օրը Սաղ. 33ր. Ուրբաթ օրը Սաղ. 91ր. Շաբաթ օրը, Սաղ. 141ր:

Աղօթքների ցուցակը տալով շարունակում է հրամանը.

"Պարելի է յուսալ, որ երեխայք հազորդելով իւրանց տնեցւոցը այս սաղմոսները և աղօթքները, շատ գերդաստուններին մէջ կզարթնի ցանկութիւն կարգել անային աղօթքներ, որոնք կամրացնէին մարդոց սէրը առ Աստուած: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այժմեան հանգամանքներիննայելով հարկաւոր է առանձին ջանքով ծանօթացնել երեսփաներին հայրենական պատմութեան հետ, և յստկապէս եօթնամեայ պատերազմի և այն պատերազմերի հետ, որոնք եղան Վերմանիան Գրանսիական լծից ազատելու համար. այլ և սովորեցնել նոցա անդիր յարմարաւոր հայրենասիրական բանաստեղծութիւններ: Իւրաքանչիւր ուսուցչի յանձնըվում է այդպիսի ժողովածուի մի օրինակ": Ստորագրուած է Թագ. Պառլ. Վեր. Վործ. Բաժ:

Այս հրովարտակի վերայ մի Վերմանացի լրագիր հետեւեալ նկատողութիւնն է անում:—Սենք կասկածում ենք շատ այն մասին, թէ արդեօք կարելի է ծանօթացրնել երեսփաներին այն զարհուրելի, հոգեւաստան նկարագրութիւնների հետ, որոնք վրդովում են բնական զգացմունքները մեր մարդկութեան: Պասկածում ենք, լսել է արդեօք երեսփաների հարցասիրութիւնը դրդուել դէպ ի մեծամեծ ընդհանուր արիւնհեղութիւններ և հրդէհներ, պղտորել նոցա խաղաղական կեանքի մաքուր հասկացողութիւնները ազգայնութեան սկզբունք ասուածով և բաւականին կասկածելի հայրենասիրութեան արիւնաշաղղ գոյներով: Բայց մենք համարձակ յայտնում ենք մեր բողոքը, եթէ կարծում են, որ մենք ուսուցիչներս յանձն կառնենք

երեսփաների մէջ զարթեցնել արհամարհութիւն և ատելութիւն դէպ ի ուրիշ ազգեր, իրրեւ մերժուածներ Աստուծոյ երեսից, ներկայացնելով միեւնոյն ժամանակ ինչպէս ընդդիմապատկեր, Վերմանական ազգը, որ ընթանում է Աստուծոյ առաջ աղօթքով և երգեցողութեամբ, այդ ոչ միայն կլինի ստութիւն, որը յայտնի երեւում է պատմութեան ամեն մի էջերի մէջ, այլ և հակառակ մանկավարժութեան. որովհետեւ երեսփայքը Եւ միայն չեն կարող ձիւտ կշռադատութեամբ ըմբռնել պատմական անցքերը, այլ և այդ ընդդէմ բաւոյականութեան. — որովհետեւ տանում է դէպ ի անտանելի ամբարտաւանութիւն և դէպ ի արհամարհանք և ատելութիւն առ մերձաւորը: Աւ այդպէս պատերազմը ու նորա տմարդի հարուածները ոչ միայն արհարանում են, այլ և բարձր կրօնական լուսափայլութիւնով հովանաւորված՝ դուրս են երևում ինչպէս հայրենաց սիրոյ քաջադործութիւններ:

Բաւական է երեսփայոց գիտնալ, թէ եղել են պատերազմներ և թէ կրկին կատաղում է պատերազմ. իսկ դատել նորա ամենակարեւորութեան և իրաւացիութեան մասին՝ նոցա դոցա գործը չլինելը ամեն որ հասկանում է: Բայց և այդպէս պահանջում են դաստիարակներից գրգուել երեսփաներին, որ սոքա մասնակցին պատերազմի և ատելութեան դործերի մէջ. եթէ ուսումնարաններից պահանջուի որեւիցէ մասնակցութիւն պատերազմի վայրկեանների մէջ, այս կլինի նորա մասնակցութիւնը, որ նա կմեղմացնի ազգերի փոխադարձ ատելութիւնները, բացատրելով մոլորութիւնները, դիմամբ կամ առանց դիտ-

ման արած ստուծիւնները, բացատրելով նոյնպէս, որ տմարդութիւնը կամ վայրենութիւնը, որոնք դժբաղտաբար շատ անգամ լոյս են ընկնում երեսայոց չորս կողմի շրջանում և սաստիկ խորտակում են մանուկների դիւրազգած ոգին, չեն կարող արդարանալ մինչև անգամ այնպիսի բացառական հանգամանքներով, որպիսին է պատերազմը: Մտքով անցկացնելը անգամ կարելի չէ այնպիսի հանգամանք, որով կարողանար արդարանալ այն ուսուցիչը, որը բացատրած լինէր երեսասերին, թէ մարդասիրութեան յաւիտենական օրէնքը երբեմն լուծուիլ պէտք է, ուրիշ կերպ է մտածում Աշխուրդեան թագաւորական կառավարութիւնը. թող նա պահանջէր ուսուցիչներից մաղթել Պետրմանական զօրքին յաղթութիւն վերոյնշանակեալ աղօթքին համեմատ. բայց մենք հրապարակաւ բողոքում ենք այն սաղմոսների ընտրութեան դէմ, որոնք նշանակուած են իւրաքանչիւր օր ուսումնարանի մէջ կարդալու համար և երևի տանը ևս, որոնք երեսասերը սնդիր սովորելով երբէք չեն մոռանալ ու սովորածները կթողնեն նոցա մէջ անջնջելի տպաւորութիւններ: Իսկ թէ մենք իրաւունք ունինք բողոքել. — սո՛ւն յոյս ունինք, որ կհամաձայնին ոչ միայն դաստիարակները, այլ և սոհասարակամեն բարեմիտ մարդիկ, կարգալով հետեւեալ հատուածները նշանակած սաղմոսներից. Աղմ. զլ. 5. տուն, 7. Այրաւսանես զայնոսիկ, որք խօսէին բղուաւ: Օսյր արիւնահեղ և նենգաւոր պիղծ առնես դու Տէր, Տուն 10. Օր ոչ գոյ ի բերանս նոցա ճշմարտութիւն, և սիրաք նոցա նանրեալք են: Արպէս գերեզ-

ման բաց են կոկորդք նոցա, և լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն: Տուն 11. Ըստ բազում ամբարշտութեան նոցա մերժեալ զնոսա, զի դառնացուցին դքեղ: Պլ. 20. տուն, 8. Վացի ձեռն քո ի վերայ թշնամեաց քոց, և աջ քո գոցէ զամենայն ատելիս քո 10 տուն. Վիցես զնոսա որպէս հնոց ի հուր ի ժամանակի երեսաց քոց: Տէր բարկութեամբ իւրով խռովեցուսցէ զնոսա, և հուր կերիցէ զնոսա: Պառզ նոցա յերկրէ կորիցէ և զաւակ նոցա յորդուց ի մարդկանէ: Աղմ. 26 զլ. 2, տուն. Ի մերձենալ առ իս չարաց ուտել զմարմին իմ, նոքա տկարացան և անկան: 10 տուն. Հայր իմ և մայր իմ թողն զիս և Տէր իմ ընկալաւ զիս: Աղմ. զլ. 32, տուն. 8. Յրուէ Տէր զեորհուրդս հեթանոսաց, անարգէ Տէր զեորհուրդս ժողովրդոց: 12 տուն. Երանի ազգի, որոյ Տէր Եստուած Յակովբայ օգնական է նմա, ժողովուրդ, զոր ընտրեաց ի ժառանգութիւն իւր:

Աւերջին Աղմոսը. զլ. 139, որ անուանված է "Եղօթք երեւելի և աներևոյթ թշնամիներից փրկվելու համար" սկսվում է այսպէս. Եսրեցո՞ զիս Տէր ի մարդոյ չարէ, յառնէ անիրաւէ փրկեալ զիս: Խորհեցան զանօրէնութիւն ի սիրտս իւրեանց, զոր ամենայն պատրաստեցան ի պատերազմ: Արեցին զեղուս իւրեանց որպէս զօձի, և թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա: Պահես զիս Տէր ի ձեռաց մեղաւորի և ի մարդոյ չարէ փրկեալ զիս: Խորհեցան խափանել զգնացս իմ. թագուցին ամբարտաւանք որդայթ ինձ: Լարս ձգեցին որդայթ ոտից իմոց, շուրջ զշաւօք իմովք եղին ինձ զգոյթակղութիւն: Մի մատներ զիս Տէր ի ցանկութիւն մեղաւորաց, ոյք խորհե-

ցան վասն իմ մի՛ ընդ վայր հարկաներ զիս։
Օ՛ի մի՛ երբեք բարձրացին և խորհուրդք
նոցա մի՛ կատարեսցին, վախճան կատարա-
ծինոցա, վստակ չթանց իւրեանց ծած-
կեացէ զնոսա։

Այս բոլոր սաղմոսները թագաւորական
կառավարութիւնը կատարելապէս պատ-
շաճ է համարում զէպ ի Գրանսիացւոց
ազգը առհասարակ, սցսինքն զէպ ի ամեն
մի Գրանսիացին առանց բացառութեան,
և ուրիշ կերպ անկարելի է երեսային հաս-
կանալ, քան վերաբերութեամբ զէպ ի բո-
լոր ազգը առ հասարակ։ Բնական է, որ
նոքա ամեն մի Գրանսիացու պէտք է ներ-
կայացնեն իրանց իբրեւ «ո֊ս», «ըն֊ս»
հեղ, չափ, իբրեւ Վերմանացւոց մարմի-
նը ուտող, իբրեւ օձալեզու և թիւնալից
հիթանոս։ Նոքա չեն կարող չարհամար-
հել և չատել Գրանսիացիներին ինչպէս
Աստուծոյ ատողների, ինչպէս Աստուծոյ
թշնամիներին և ամբարիշտներին, ուստի և
բարկութիւն Տեառն կործանեցէ զնոսա։
Արիցէ զնոսա ի հնոց հրոյն. և հուր կե-
րիցէ զնոսա. և նա կջնջէ նոցա պտուղը
երկրի վերայից և նոցա սերունդը մարդ-
կանց որդիքների միջից. հետեաքար և Գը-
րանսիական ազգի երեխաները ենթարկ-
վում են Աստուծոյ բարկութեան տակ իւ-
րեանց ծնողների հետ միասին։ Մեր ու-
սումնարանների ուսանողները "սերունդ"
բառի նշանակութիւնը սուրբ դրքի մտքին
համեմատ են հասկանում Ադամի, Նւայի
և Երրահամի պատմութիւնները կարդա-
լու ժամանակը։ "Ահա ինչպիսի հրէշներ
են Գրանսիացիք, որոց դէմ պատերազ-
մում են մեր հայրերը և եղբայրները" կմը-
տածեն երեխաները. "Թող կործանվին

այս Գրանսիացիները, այսպէս է ասում Աս-
տուծոյ խօսքը, նոյնպէս ասում են և մեր
ուսուցիչները հրապարակական աղօթքի
ժամանակ. սորա համար ևս կանչում են
նոցա դէմ ամենողորմած և ամենակալ Աս-
տուածը։ Աւ իբրեւ պարզ ընդդիմապատ-
կեր չարագործներից բաղկացած ազգի հետ
մի շարքում ցոյց է արվում և մի ուրիշը,
որին Աստուած ընտրեց իւր ժառանգու-
թեան համար. և երանելի է նա Ահովայի
ազգը, ընտրեալ ազգը, Վերմանական ազ-
գը։ Աւ լսում են երեխաները սաղմոսներ,
ընթերցմունքներ, ջերմեռանդօրէն թոթո-
վում են աղօթքի բառերը, երգում են նո-
քա եկեղեցական երգեր, բայց շատերի,
խիստ շատերի աչքերի առջին կերպա-
րանվում է մի պատկեր, որ խոր և անջնջ-
լի կերպով ապաւորվէ իւրեանց յիշո-
յութեան մէջ, պատկեր՝ անջատման հօր,
կրր սա ղիմում էր պատերազմ ընդդէմ
չարագործ Գրանսիացիների։ Շուրջ և
զրեթէ խիստ կերպով մտիկ էր անում
հայրը իւր ընտանեաց վերայ թէ և նորա
աչքերից առատ արտասուքը թափում
էր. երբեք դեռ երեխայն չէր տեսել իւր
հօրը այսպիսի դառն արտասուք թափե-
լիս. իսկ նորա ձայնը զողոթնում էր և ընդ-
հատվում։ Աւ շատ անգամ նա կրկնում
էր նորան իւր հրաժարականը, երկար ժա-
մանակ բռնում սեղմում էր մանկիկ քրոջ
քնքուշ ձեռքերը, և յաճախ, քան երբ և
իցէ, համբուրում և փայփայում էր. շատ
անգամ կրկնում և կրկնում էր զողոթնուն
ձայնով "Թող պահանէ քեզ Աստուած.
մի՛ ցաւիք, մնացէք բարեաւ իմ սիրելի-
ներ, մնացէք բարեաւ, մի՛ յուսահատիք"։
Իսկ մայրը հօր պարանոցով փարուած

հեծում և այնպէս արտասովում էր, ինչպէս չէր պատահել երբեք. երբ հայրը մեղմաբար աւնեւում իւր պարանոցից մօր ձեռքերը, վերջին անգամ ասում էր "Թող պահպանի քեզ Աստուած իմ նազելի, Թող պահպանի Աստուած և մեր երեխաներին" և տալով նորան մանուկը և դարձնելով երեսը դէպ ի իրեն շրջապատող ուրիշ մարդիքը, որոնք նոյնպէս պատրաստուած կանչում էին նորան՝ բարձր ձայնով ասում էր "գալի՛ս եմ, գալի՛ս եմ, մայրը կամենում էր թռչել նորա ետեւից և երեխաները խառնում էին իրանց լացի ձայնը մօր հեծեծանքի հետ: Հետոյ մայրը դեռ երկար ժամանակ թաշկինակով նշան էր տալիս հօրը, քանի որ երեւում էր նա. և տուն դառնալուց յետոյ նա նստած սեղանի մօտ և խոնարհեցրած իւր գլուխը դեռ ևս լալիս էր երկար: Այլ ահա կանգնած է երեխան և բորբոքուած ու անշարժ դէմքով նայում է աղօթող ուսուցչի վերայ. նա ցնցողական կերպով սեղմած է իւր երեխարական ձեռքերը և գոգոջուն շրթունքները ստամբների տակն առած՝ զըստում է իւր արտասուքը, որոնք ախամայ կաթում էին խղճուկի քնքուշ այտերի վերայով. նա ըստ երեւոյթին ուշադրութեամբ լսում է, թէ ինչպէս է սաղմոսեւդուն ուսուցչի բերանով նկարագրում եղանակործ ճարտիտացիներին: Բայց յատկապէս նա, թշուառ այրու թշուառ որդին, նա չէ լսում սաղմոսները. նորա ականջումը հնչում է իւր մօր սիրտ կարասող աղաղակը և հօր վերջին հրաժարականը իւր նազելի ամուսնեւոյ և իւր միակ ապաւէն անդրանիկ որդեւոյ հետ:

"Ի՞նչ կանենք այժմ մենք առանց քեզ" ասում է նա, "իսկ եթէ նոքա քեզ կըսպանեն՝ իմ հարազատ, դու մեր ապաւէն ու օգնական, դու և հօրդ վերջին մխիթարութիւն մահուան դառն ժամում, նոյնպէս բարիդ, նոյնպէս յարգելիդ ինչպէս և նա, իմ թշուառ որդի, Աստուած իմ, Աստուած իմ":

Այս ամեն այրող ցաւերը, զարհուրելի պատկերները տեսնելով և ձայները լսելով թշուառ երեխան նոյնպէս ցանկանում է լինել "գործիք Աստուծոյ" սուտ խօսողներին կորուսանելու համար, որովհետեւ "արինասեղ և նենգաւոր մարդիքը պիղծ են Աստուծոյ առաջին": Մենք սարսափելով ենք ներկայացնում մեզ այսպիսի դառն և զարհուրելի պատկերներ և զգացմունքների երեխաների դիւրազգաց սրտերի վերայ, այն խոր և անմոռանալի ստելութիւնը, որ ձգում են նոքա նոցա սրտերի մէջ, ատելութիւնը,—որը պէտք է երեան գայ վերջապէս անգստելի կատաղութիւնով: Վժբախտաբար երեխաները ծանօթանում են լրադրներից և առօրեայ կեանքից առաւել, քան թէ հարկաւոր էր. ընդհանուր բնական արտունջը հասարակաց անբախտութեան մասին առանց դորան էլ ունի նոցա վերայ փնտաւար ազդեցութիւն, բացի դորանից զըտնովում են և այնպիսի մարդիք, որոնք չարամիտ ստելութիւններով և աւաստակներով մեծացնում են այդ արտունջը: Այլ մի՞թէ այսպիսի դիպումներում ուսումնարանը պարտաւոր է ատելութիւն և կատաղութիւն դուռելու գործիք լինել, այսինքն դիտակցաբար և կանոնաւորաբար կերպով ներդրուել հակառակ ընդհանու-

րի խաղաղութեան, որ մարդկութեան բարիքներից մեծագոյնն է:

Մի՞թէ Լշրճուղեան թագաւորական կառավարչութիւնը կարծում է, որ այս ճանապարհով ամրանում է մեր դարու քրիստոնէական կրթութիւնը և կապը ընկերական սիրոյ ու ուսուցանում է, թէ մենք ամենքս էլ մի հօր որդիք ենք:

Մի՞թէ հարկաւոր է մեզ այդպիսի կրթութիւն և այդպիսի ատելութիւն՝ Լապալէօնին յաղթելու համար. մի՞թէ կարելի է ուսումնարանին ընդունել այնպիսի պայմաններ, որոնք երեխաների մէջ կը զարթնացնեն զազանական բնագոյնութիւններ: Ո՛չ. մենք ուրիշ կերպ ենք մտածում, մենք Վերամանացիքս պարծենում ենք այն զիտակցութեամբ, որ մենք չենք կարօտում ազգային ատելութիւն տարածող կրթութեան, ամեն իրաւացի պատերազմերում յաղթող դանուելու համար: Բայց թագաւորական կառավարչութեանը բաւական չէ մի նպատակը. նա յոյս ունի, որ պատերազմի պատճառաւ շինած աղօթատեղիները պատճառ դառնան ընտանեկան բարեպաշտական պարամունքի, ամրացնելով ամենի մէջ սէր դէպի Մատուծոյ խօսքը: Եւ այսպէս ներկայ պատերազմը ծառայելով նոյնպէս հոգեւորականութեան նպատակներին և ատելութիւնը առ Ֆրանսիացիք միտք ունին դործ դնել իբրեւ հաւատոյ ամրութեան և տարածման մի դործիք: Այո՛ դա ևս բովանդակվում է պատերազմի նպատակի մէջ:

Արպիսի և լինէր մի երկրի կրօն, ասում է Բեօքը, նորա պաշտօնեաների աչդեցութիւնը զօրանում է միշտ անընդհատ և վտանգաւոր պատերազմերով, որոց պատա-

հականութիւնները պղտորում են մարդկանց միտքը և դրդում են պաշտպանութեան բնական հնարքները պակասած ժամանակը դառնալ դէպի գլխահանք: Այսպիսի միջոցներում հոգեւորականութեան նշանակութիւնը բարձրանում է, և նոյնց տալով իրան իբրեւ Մատուծոյ կաթիլ թարգման, բարձր ձայն է ստանում հասարակութեան մէջ և միսիթարում է նրան իւր կորուստների մէջ, այդ կորուստները մեկնելով իբրեւ մեղաց պատիժներ, և նրանց պատճառը համարել տալով իրանց անջերմեռանդութիւնը կրօնական պարտաւորութիւնների մէջ, և կամ ահա համարհում է թիւնը ծէսերի և արարողութիւնների, որոց մէջ հոգեւորականութիւնը ունի յայտնի օգուտներ: Մեր Ռուսական հասարակութիւնը արդիւնաւոր օգուտ և կենդանի հետաքրքրութիւն ունի Ֆրանսիական և Պրուսական այս նշաւաւոր պատերազմի մէջ, և մենք կարծում ենք, որ մեր յառաջ բերած իրողութիւնը պայծառ կերպով յայտնի է անում Պրուսական իշխանութեանց դործողութիւնը և նոյնա գաղափարները: Մենք կարծում ենք նոյնպէս, որ դատաւարակները և ուսուցիչները կզանեն այս տողերի մէջ յայտնի նիւթեր, վճռելու համար այն հարցը, թէ ի՞նչպիսի յարաբերութիւն պէտք է ունենայ ուսումնարանը պատերազմի դործի մէջ:

Թարգմանեաց

Սարգիս Բաղդասար Սանտիւկեան
Բաղդասարեանց:

Ի Ս - Կիւն: